ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵՋ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայ ժողովրդի և նրա մշակույթի ձևավորումը տեղի է ունեցել պատմական բարդ պայմաններում։ Դարերի ընթացքում հարաբարդվել են հասարակական-տնտեսական, քաղաքական, էթնիկական և կուլտուր-պատմական տարբեր անցքեր ու իրողություններ, որոնք հայ ժողովրդի ինչպես էթնոգենետիկ, նույնպես և էթնոկուլտուր զարգացման պրոցեսների վրա ունեցել են բաղմակողմանի, երբեմն էլ հակասական ներգործություն, երկարացնելով այդ պրոցեսների ընթացքը։

Հնագիտական և գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի դաշտային, լեռնային ու նախալեռնային գոտիների բնակչությունը, հարմարվելով տեղի բնակլիմայական պայմաններին, վարել է տարբեր բնույթի տնտեսություն, ապրել է ոչ միօրինակ կյանքով։ Երկրի և նրա բնակչության կտրտվածությունը, աշխատանքի հասարակական բաժանման տարբեր բնույթն ու մակարդակը, հաղորդակցության ճանապարհներին մոտ կամ հեռու գտնվելը, առավել զարգացած և առաջադեմ կամ նվազ զարգացած երկրներին սահմանակից և հաղորդակից լինելու և այլ հանգամանքներ պայմանավորել են երկրի տարբեր շրջանների ինչպես հասարակական-տնտեսական, այնպես էլ նյութական և հոգևոր մշակութային զարգացման տարբերությունների առաջացումը։ Բազմակողմանի ընդհանուր կապերի և փոխազդեցությունների բացակայության պայմաններում Հայաստանի բնիկ ցեղերը ստեղծել էին իրենց տեղական նեղ բնույթ կրող և ինքնատիպ մշակույթը։ Իսկ եթե նկատի ունենանք, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները միատարր չէին էթնիկական կազմով ու լեզվով, ապա պարզ կլինի, թե որպիսի բարդ պայմաններում էր տեղի ունենում հայ ժողովրդի և նրա մշակույթի ձևավորումը։

Այս ամենով հանդերձ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը դեռևս ուրարտական թագավորության ժամանակներում բավականաչափ առաջ էր գնացել, իսկ Ուրարտուի անկումից հետո թևակոխեց իր ավարտական փուլը։ Մ. թ. ա. VI—V դդ. Արմինան կամ Արմենիան իբրև միաբնական երկիր և հայ ժողովուրդն իբրև կազմավորված էթնոս արդեն կային ու ճանաչում էին գտել թե՛ հարևանների կողմից և թե՛ այդ դարերի գրավոր աղբյուրներում։

Հայ ժողովրդի կազմավորմանը համընթաց, իբրև այդ պրոցեսի օրինաչափ հետևանք, ձևավորվեց նաև հայկական մշակույթը։ Նրա հիմքում, բնականաբար, ընկան հայկական ցեղերի և ցեղախմբերի լոկալ մշակույթները, որոնք դարերի ընթացքում նկատելի ընդհանրություններ ձեռք բերեցին, միավորվելով ստացան համահայկական մշակույթի բնույթ, որն ինչ-որ չափով յուրացրեց, իր մեջ լուծեց նաև Հայկական լեռնաշխարհի ոչ հայկական ցեղերի ու ցեղախմբերի մշակույթը կամ նրա տարրերը։ Այս իմաստով հատուկ

ուշադրության և ուսումնասիրության է արժանի ուրարտական մշակութային ժառանգության հարցը հայկական մշակույթի մեջ։ Վերջին տասնամյակներում կատարված հնագիտական պեղումների շնորհիվ երևան են եկել նորանոր փաստեր, որոնք նախապես հայտնի եղածների հետ միասին թույլ են տալիս պնդելու, որ ուրարտական մշակույթի շատ տարրեր կազմել են ձևավորվող համահայկական մշակույթի բաղկացուցիչ մասը։

Հայկական մշակույթի ձևավորման գործում զգալի դեր են խաղացել նաև Հայաստանի և նրա բնիկների կապերն ու շփումները հարևան երկրների ու նրանց մշակույթի, մասնավորապես Մերձավոր Արևելքի հինարևելյան մեծ քաղաքակրթության հետ։ Հայերն իրենք ծնունդ են Մերձավոր Արևելքի, դեռևս հնում որոշ չափով հաղորդակից են եղել հինարևելյան քաղաքակրթությանը, իսկ Հայկական լեռնաշխարհում գոյացած Ուրարտուն Հին Արևելքի առավել նշանակալից պետություններից մեկն էր, միանգամայն բնորոշ հինարևելյան մշակույթով։

Այս ամենը պայմանավորեցին ձևավորվող հայկական մշակույթի արևելյան ավանդական կերպարն ու բնույթը։

Համահայկական մշակույթի ձևավորման ավարտական փուլում նկատելի դեր են խաղացել նաև քաղաքական իրադրությունն ու հանգամանքները՝ ուրարտական պետության թուլացումն ու անկումը, հայկական պետության կազմավորումը, Աքեմենյան Իրանի տիրապետության հաստատվելը Հայաստանի վրա։

Ուրարտական պետությունը զուրկ էր էթնիկ միատարրությունից։ Իրենք ուրարտացիները, թեև հասել էին ռազմա-քաղաքական տիրապետության՝ Հայկական լեռնաշխարհի բնիկների վրա, բայց կազմում էին նրանց մի փոքրիկ մասը. ավելին, նրանք չկազմավորվեցին իբրև ժողովուրդ և մնացին միավորված ցեղախմբի մակարդակին։ Այդ էր պատճառը, որ ուրարտական պետության անկումից հետո նրանց, իբրև էթնիկական միավորի, հետքն էլ վերացավ և մնաց միայն նրանց պետականության պայմաններում կերտված հարուստ մշակույթը։ Բնականաբար այն չէր կարող աննշանակ լինել Հայկական լեռնաշխարհի բնիկ հայկական ցեղերի, ապա և հայ ժողովրդի մշակույթի հարստացման և ձևավորման գործում և, ինչպես ասվեց, նրա շատ տարրեր մտան ձևավորվող հայկական մշակույթի մեջ։

Ուրարտուի անկումից հետո գոյացած հայկական պետականությունը ենթակա էր նախ մեդական կամ մարական, ապա և աքեմենյան հզոր տերություններին ու կարճատև կյանք ունեցավ։

522—520 թթ. ապստամբությունը աքեմենյան տիրապետության դեմ աղատություն չբերեց հայ ժողովրդին։ Ավելին, Դարեհ I թագավորը վերացրեց հայկական պետականությունը, և Հայաստանը ներդրավվեց աքեմենյան լայնածավալ տերության քաղաքական սիստեմում, որտեղ երկիրը մնաց մինչև այդ տերության կործանումը։ Մեզ հասած փաստերը ակնհայտ կերպով ցույց են տալիս, որ զգալի է եղել աքեմենյան (հետագայում նաև պարթևական) Իրանի ազդեցությունը հայկական թե՛ նյութական, թե՛ հոգևոր մշակույթի ու լեզվի վրա։ Իրանական ազդեցության չափերն ու նշանակությունը ավելի պարզ կդառնան, եթե նկատի ունենանք, որ համահայկական մշակույթի ձևավորումը հիմնականում տեղի ունեցավ աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում։

Ինչ խոսք, իրանական հարուստ և զարգացած մշակույթի ազդեցությունը աքեմենյան տերության քաղաքական սիստեմում գտնվող երկրների մշակույթների վրա զգալի է եղել և ունեցել է ինտեգրատիվ նշանակություն։ Սակայն կոպիտ սխալ կլիներ իրանական և հայկական մշակույթների մերձավորությունը, նմանությունները բացատրել միայն ազդեցություններով. պետք է հաշվի առնել նաև այդ մշակույթների հինարևելյան ընդհանուր արմատների ու ակունքների դերն ու նշանակությունը։ Բացի այդ, իրանական մշակութային ազդեցությունը կարող էր միջնորդված լինել ասորեստանյան, ուրարտական և այլ կուլտուրաների ազդեցությամբ՝ իրանականի վրա։ Այդ ազդեցությունը նշել են Մերձավոր Արևելքի հին մշակույթի շատ ուսումնասիրողներ՝ Էրիխ Շմիդտը, Ռոման Գիրշմանը, Բորիս Պիոտրովսկին, Հ. Լուշեյը, Պիեր Ամանդրին, Գ. Տիրացյանը և ուրիշները։

Ամեն մի դարաշրջանի մշակույթն ունի իր լեզուն, իրեն բնորոշ առանձնահատկությունները, ուստի ընդհանրությունները, այն էլ միևնույն աշխարհագրական արեալի հարևան երկրների մշակույթների միջև, կարող են լինել ոչ միայն ազդեցության կամ փոխառության հետևանք, այլև տվյալ դարաշրջանի զարգացման օրինաչափություններով պայմանավորված բնորոշ գծերի դրսևորում։

Մշակութային ընդհանրությունների առաջացման գործում զգալի էր նաև դաղափարախոսության, մասնավորապես կրոնա-պաշտամունքային պատկերացումների և ըմբռնումների որոշակի ընդհանրությունը Մերձավոր Արևելքի երկրների ու ժողովուրդների միջև։ Դրանք նույնպես պայմանավորում էին ընդհանրությունները նյութական մշակույթի պաշտամունքային բնույթի իրերի և առարկաների միջև։

Այսպիսով, աքեմենյան արևելի երկրների մշակութային ընդհանրությունների պատճառները բարդ ու բազմաշան են եղել, որոնց թվում անմիջական ազդեցության և փոխառությունների դերը չի կարելի անտեսել։

Նյութական մշակույթի բնագավառում իրանական ազդեցությունը երևան է գալիս կիրառական արվեստի՝ Հայաստանում հայտնաբերված VI—IV դդ. բազմաթիվ առարկաների վրա։

Ինչ վերաբերում է հոգևոր մշակույթին, ապա բավական է հիշել հին հայկական առասպելաբանությունը և հեթանոսական աստվածությունների պանթեոնը, որոնց մերձավորությունը իրանական մի շարք առասպելների և պանթեոնի հետ վաղուց է նշված։

Այսպիսով, արևելյան գիծը կամ ուղղությունը հայ մշակույթի բնիկ արմատական գիծն է եղել, պայմանավորված նրա ակունքներով, պատմական զարգացմամբ և միջավայրով։

Այս ավանդական ուղղությունն իր դրսևորումներն ու հետագա զարգացումն է ունեցել տարբեր բնագավառներում՝ ճարտարապետության, քաղաքաշինության, քանդակագործության, մետաղամշակության, խեցեգործության՝ մի խոսքով մարդու գործունեության դարավոր փորձի և հմտությունների բոլոր ասպարեզներում։ Այդ են վկայում հին հայկական դարաշրջանի հուշարձանների՝ Գառնիի, Արմավիրի, Արտաշատի և այլ հնավայրերի պեղումների շնորհիվ հայտնաբերված հարուստ և ամենաբազմաշան նյութերը։

Հայկական մշակույթի մեջ, սակայն, շուտով պիտի առաջանար նրա զարգացման երկրորդ հիմնական գիծը կամ ուղղությունը, որով հին հայկական մշակույթը պիտի կապվեր Արևմուտքի հետ։

Արևմտյան գծի կամ ուղղության առաջացումը հայ մշակույթի մեջ հետևանք էր ամբողջ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային այն շրջադարձի, որը հետևեց Հունա-մակեդոնական բանակների՝ Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ դեպի արևելք կատարած արշավանքներին և որին տրված է Հելլենիզմ անունը։

Մինչև մ. թ. ա. III դարը Հայաստանը կուլտուրական կապեր է ունեցել նաև Արևմուտքի, մասնավորապես Հոնիական-էգեյան կուլտուրական շրջանների հետ, սակայն դրանք կրել են պատահական բնույթ։ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ մ. թ. ա. IV դարի վերջերից, Հայաստանը ներգրավվեց Հելլենիստական Արևելքի ոլորտի մեջ, երկրի կյանքում տեղի ունեցան հասարակական-տնտեսական, քաղաքական, գաղափարական և կուլտուրական արմատական տեղաշարժեր (III—I դդ.)։ Նշանակալից առաջադիմություն ապրեց երկրագործությունը, խորացան ստրկատիրական հարաբերությունները, հիմնվեցին շուրջ երկու տասնյակ քաղաքներ, որոնց թվում Արմավիր, Արշամաշատ, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ և այլն, դարձան արհեստագործության, առևտրի, կուլտուրայի և արվեստի խոշոր կենտրոններ։ Դրա ցայտուն վկայությունը եղան հին հայկական քաղաքների՝ Արմավիրի, Արտաշատի, Գառնիի Սովետական Հայաստանում կատարվող պեղումների արդյունքները։ Պահպանվեց և շարունակեց զարգանալ մշակույթի տեղական արևելյան ուղղությունը, որը վաղուց էր ավանդական բնույթ ստացել, միաժամանակ առաջացավ և ձևավորվեց հայ մշակույթի երկրորդ հիմնական՝ արևմտյան ուղղությունը, որն իր արտահայտություններն ունեցավ կուլտուրայի տարբեր բնագավառներում։

Քաղաքաշինության մեջ, ինչպես ցույց են տալիս Արտաշատի պեղումները, տեղական ավանդները զուգորդվեցին Հելլենիստական սկզբունքների հետ։ Միաժամանակ ճարտարապետության մեջ առաջացան ճակատոնով, երկթեք տանիքով և սյունաշարդ շենքեր։ Կիրառություն ստացավ պատի Հելլենիստական շարվածքը՝ քարի սրբատաշ խոշոր բլոկներ, իրար հետ միացած երկաթե և բրոնզե գամերով, որոնք էլ քարերի հետ ամրացված են արճիճով։ Հետագայում, մ. թ. ա. III դարում օգտագործվեց քարի և աղյուսի խառը (mixtum) շարվածքը։ Դեռևս մ. թ. ա. II դարում հայ շինարարները սկսեցին լայնորեն օգտագործել շենքերի ծածկի կղմինդրը, որն անտիկ ձևեր ունի։ Արևմուտքից թափանցած բոլորովին նոր երևույթ էր հիպոկաուստի՝ շենքերի ստորհատակյա ջեռուցման սիստեմի օգտագործումը։ Հիպոկաուստ են ունեցել, օրինակ, հին Վաղարշապատում, Գառնիում և Արտաշատում բացված անտիկ դարաշրջանի բաղնիքները։

Շենքերի ներքին հարդարման մեջ սկսեցին կիրառել նոր ձևեր՝ կրաշաղախից քիվեր, որմնանկարներ, մոզաիկա։ Արտաշատում հայտնաբերվել են որմնանկարների բեկորներ, որոնք որոշակի ցույց են տալիս, որ այստեղ օգտագործվել է որմնանկարչության այսպես կոչված պոմպեյան առաջին ոճը։

Գառնիի բաղնիքի մոզաիկ հատակը պատկերում է կյանքի ծնունդը ծովում, սիրո, ամուսնության և կյանքի հավերժության գաղափարը։

Ծավալային քանդակագործությունը դարեր շարունակ ամուր պահեց ար-

խաիկ, նկատելիորեն պարզունակ, ավանդական-պայմանական ոճը։ Բայց տեղի ունեցավ հայկական աստվածների պանթեոնի համադրությունը հունա-հելլենիստականի հետ. Արամազդը համադրվեց Դիոսի կամ Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլեսի, Տիրը՝ Ապոլոնի, Նանեն՝ Աթենասի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի հետ։ Դա հնարավորություն ընձեռեց դրսից բերելու բրոնզե և մարմարե արձաններ և տեղադրելու հայկական տաճարներում։ Գտնվել են դրանց հետքերը։ Արտեմիս-Անահիտի բրոնզե արձանի գլուխը գտնվել է Սատալայից արևելք, Անահիտի տաճարից ոչ հեռու և պահվում է Բրիտանական թանգարանում։ Դա հելլենիստական արվեստի մ. թ. ա. II դարի մի գերազանց ստեղծագործություն է, որը Հայաստան է բերվել Փոքր Ասիայից, հավանաբար Պերգամոնից։ Իսկ Աֆրոդիտե-Աստղիկի մ. թ. ա. II դարի վերջերի—I դարի առաջին կեսի մարմարե փոքր չափերի արձանը (վզից մինչև ոտքերի թաթերը 57 սմ) 1971 թ. գտնվեց հին Հայաստանի փառաբանված մայրաքաղաք Արտաշատում։

Տեղական-արևելյան բնույթի արձանագործությունը I—III դդ. նկատելի առաջադիմություն է ունեցել, ինչպես ցույց են տալիս Երևանի և Լենինականի մոտ գտնված տղամարդու և կանացի՝ III դարով թվագրվող գլուխները։ Տեղական դեղնավուն տուֆից պատրաստված երևանյան գլուխը մազերի խոշոր գալարներով, երկճյուղ մորուքով, որոնք բնորոշ են III դարին, զուրկ չէ հռոմեական պորտրետային քանդակագործության որոշ գծերից։ Մեզ հայտնի են գրավոր տեղեկություններ, թե հեթանոսական արձանները որպիսի մոլեռանդությամբ ոչնչացվեցին IV դարի սկզբներին, երբ հայերը քրիստոնեություն ընդունեցին։

Գործիքների և զենքերի բնագավառում հաստատուն պահպանվեցին տեղական արևելյան տիպերը, իսկ անտիկ ձևերի ներթափանցումը շատ թույլ արտահայտություն ունեցավ։ Հակառակ պատկերն ենք տեսնում գեղարվեստական մետաղագործության և զարդերի բնագավառում։ Արևելյան ձևերի կողքին նույնքան զորեղ արտահայտություն են ունենում հունա-հելլենիստական-հռոմեական ձևերը, տեղի է ունենում նաև նրանց փոխադարձ ներթափանցումը։

Արևելյան կերպար ունեն և արևի ու լուսնի՝ կրակի ու ջրի առասպելաբանական պատկերացումների հետ են կապվում մի քանի բրոնզե արձանիկներ, օրինակ, Արտաշատում գտնված աստիճանավոր պատվանդանով արձանիկը, որը պատկերում է եղջերուի գլխին կանգնած արծիվ, ինչպես և արծվի պատկերով արձանիկը։ Դրանց մերձենում է նաև Հայաստանում գտնված, բայց Լուվրում պահվող եղնիկի արձանիկը, որի գլխին նույնպիսի արծիվ է կանգնած։

Արևելյան և արևմտյան գծեր է համադրում Արտաշատում գտնված քարայծի արծաթե արձանիկը։ Նույնը կարելի է ասել Գառնիում դամբարանից գտնված 85 մանր մասերից կազմված ոսկյա վզնոցի մասին, որի վրա տիրապետող են արևելյան գծերը, ինչպես և Արևելյան Հայաստանի Միսիան ավանի իշխանական դամբարանում գտնված, արծվի պատկեր կրող արծաթե մեդալիոնների, ապարանջանների մասին։

Զգալի թիվ են կազմում արևմտյան ուղղությունը ներկայացնող մետաղե գեղարվեստական առարկաները։ Այդպիսին են Արտաշատում գտնված Էրոսի կամ Ամուրի արծաթե արձանիկը, հիպոկամպների արծաթե և բրոնզե ար-

հանիկները։ Սիսիանի դամբարանի մի մեդալիոնի վրա պատկերված է հելլենիստական աստվածուհի, որը միավորում է Իզիսի, Դեմետրեի և Նիկեի ատրիբուտները՝ ուշ հելլենիզմին բնորոշ սինկրետիկ պատկեր։ Պտղաբերության հելլենիստական սինկրետիկ բնույթի աստվածուհու գլուխներ են պատկերված Արտաշատի մի դամբարանում գտնված ականջօղերի վրա։

Ոսկե մեդալիոն գտնվել է նաև Սևանի ափից՝ մոր և մանկան պատկերով և ենթադրվում է, որ դա Անահիտ աստվածուհու պատկերն է հելլենիստական և տեղական գծերով։

Ավելի արևմտյան կերպար ունեն հին Արմավիրում գտնված մեդալիոնները, որոնք աստվածությունների պատկերներ են, իսկ ոմանց կարծիքով՝ թատերական դիմակներ։

Արտաշատում գտնվել են նաև ոսկյա տերևներից կազմված թաղման պսակ, ինչպես և թաղման հելլենիստական բնույթի ծեսերի հետ կապված ոսկյա շրթնակալ, կարոսի (ΣΕ ΛΕΧΟΝ) ոսկյա տերևներ և այլն։ Հանգուցյալին թաղելիս բերանում դրամ դնելը տիպիկ հելլենիստական երևույթ էր, բայց նման գերեզման բացվել է Դառնիում։

Հայոց Բակուր II թագավորի (161—163) արծաթե թասի վրա (գտնվել է Հյուսիսային Կովկասում), ինչպես և Պետական Էրմիտաժում (Լենինգրադ) պահվող նույնանման մի թասի վրա պատկերված են դիոնիսյան տոնախմբությունների հետ կապված թատերական տեսարաններ՝ պարող մենադա, սատիր, թատերական դիմակներ, պահարաններ, կենդանիներ, ծառեր և այլն։ Ուսումնասիրողների կարծիքով այդ թասերը ծագում են Հայաստանի մերձեփրատյան գավառներից։ Արևելյան Հայաստանում՝ Անի քաղաքի սահմաններում, գտնվել է Դիոնիս-Բաքոսի բրոնզե դիմակը, որը արևմտյան կերպարի ավելի շուտ արևելյան պատկերումն է։

Անտիկ դարաշրջանի հայկական արվեստի ուշագրավ գործեր են հայկական դրամները։ Սոփքի թագավորների մ. թ. ա. III դարում կտրած դրամներից Արսամես-Արշամի դրամը զուգորդում է արևելյան գծերը հելլենիստականի հետ։ Աբգիսարի և Քսերքսեսի դրամները տիպիկ արևելյան գծեր ունեն և մերձենում են պարթևական դրամներին։

Ավելի ուշ, մ. թ. ա. I դարում Տիգրան II-ի և նրա որդի Արտավազդ II-ի կտրած դրամները ներդաշնակ կերպով համադրում են տեղական-արևելյան գծերը արևմտյանի հետ և հանդիսանում են հայկական հելլենիստական արվեստի աչքի ընկնող ստեղծագործություններ։

Ուշագրավ է, որ հայ թագավորները դրամների վրա իրենց անվանում են Ֆիլհելլինոս (հելլենասեր)։ Արտավազդ II-ը ոչ միայն հովանավորել է հելլենիզմը, այլև հունարեն լեզվով գրել է ողբերգություններ և պատմական երկեր, Արտաշատում կազմակերպվել է Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» պիեսի բեմադրությունը։

Արտաշատում գտնվել է մի դրամ, որը կտրվել է տեղում, մ. թ. ա. 183 թ. և ունի հելլենիստական քաղաքային դրամներին բնորոշ ձևավորում։ Նրա վրա պատկերված է Տիխե աստվածուհին, որը նույնացված է հայկական պետության և Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր Անահիտ աստվածուհու հետ, իսկ մյուս երեսին տեղադրված է Նիկե աստվածուհու պատկերը և ΑΡ-ΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ մակագրությունը։ Քաղաքային դրամ կտրելը մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ նշանավորում է հելլենիստա-

կան բնույթի քաղաքային ինքնավարության առկայությունը Արտաշատում։

Հնում նյութական կուլտուրայի մասսայական և շատ կարևոր բնագավառ էր խեցեղենի արտադրությունը։ Շնորհիվ հազարամյա ավանդույթի, կավանոթների մեծ մասը, մանավանդ խոհանոցային խեցեղենի տիպերն ու ձևերը, հաստատուն կերպով հարատևում էին, ընթանալով զարգացման սեփական ուղիով, ինչպես տիպերի ու ձևերի, նույնպես և գեղարվեստական ձևավորման ու զարդերի տեսակետից։ Այդուհանդերձ հելլենիստական դարաշրջանում հայկական խեցեգործության մեջ թափանցեցին խեցեղեն անոթների բոլորովին նոր տիպեր, ինչպես և նոր զարդամոտիվներ։

Առաջին անգամ Հայաստանում երևան եկան ամֆորաներ, ամֆորիսկներ, կրատեր-կրատերիակներ, պելիկաներ, արիբալներ, մեգարյան անվանվող թասեր, ձկան ափսեներ, ունգվենտարիում անվանվող իլիկաձև անոթներ, արևմտյան կերպավորմամբ օյնոխոյաներ և այլն։ Հելլենիզմը թափանցեց նաև հույժ ավանդական և պահպանողական բնույթ կրող խեցեղենի արտադրության բնագավառը։

Նույնը կարելի է ասել խեցեղեն անոթների գեղարվեստական ձևավորման և զարդամոտիվների մասին, մանավանդ, գունազարդ խեցեղենի բնագավառում, որտեղ տեղի ունեցավ մերձավորարևելյան և հունա-հելլենիստական մոտիվների զուգորդումը՝ վերջիններիս գերակշռությամբ։

Ուշագրավ է և այն փաստը, որ ջնարակած խեցեղենի արտադրությունը, որը Հին Արևելքում, Իրանում վաղուց էր հայտնի, Հայաստան թափանցեց Միջագետքից, Սիրիայից և Փոքր Ասիայից՝ հելլենիստական մշակույթի հետ։ Տեղում արտադրված ջնարակած խեցեղենը կրկնում է անոթների օտարամուտ տիպերն ու ձևերը։

Անտիկ աշխարհից Հայաստան թափանցեց նաև ապակեղենը, որի ազդեցությամբ և նմանությամբ առաջացավ ապակեղենի արտադրությունը տեղում։

Ղլիպտիկայի բնագավառում, եթե մ. թ. ա. VI—IV դդ. տիրապետող էին հնատիպ սկարաբեոիդներն ու բազմանիստ կնիքները, որոնք արևելյան բնույթի գործեր էին, ապա հետագայում, ներմուծված օրինակների ազդեցությամբ, գեմմաները՝ մատանիների ակերն ու կնիքներն ընդունեցին հելլենիստական կերպարանք, ինչպես իրենց ձևերով, նույնպես և նրանց վրա փորագրված պատկերներով։

Հելլենիստական մշակույթի ազդեցությամբ առաջացած արվեստի բոլորովին նոր բնագավառ էր կորոպլաստիկան՝ կավե արձանիկների արտադրությունը, որը, սակայն, ոչ միայն կրկնեց Արևմուտքում հայտնի կերպարները և ավելի մերձեցավ արևելյան հելլենիզմի, մասնավորապես Սելևկիայից հայտնի տերակոտային արձանիկներին, այլև ձեռք բերեց տեղական ինքնատիպություն։ Այդպիսին են, մասնավորապես, Արտաշատում հայտնաբերված մոր և մանկան, հեծյալների, նվագող կանանց արձանիկները։

Այսպիսով, արևմտյան ուղղության ձևավորմամբ հայկական մշակույթը հարստացավ ոչ միայն նորանոր կողմերով, հնարներով, այլև մշակույթի նոր բնագավառներով։

Ամփոփենք։

Հայ ժողովրդի կազմավորման պատմական երկարատև պրոցեսը Ուրարտուի թուլացումից և անկումից հետո թևակոխեց իր ավարտական փուլը։ Մ. թ. ա. VI—IV դդ. հայ ժողովուրդը իբրև միասնական էթնոս արդեն գոյու-

թյուն ուներ։ Դրա օրինաչափ հետևանքը եղավ նաև արդեն համահայկական բնույթ կրող մշակույթի ձևավորումը՝ հայկական ցեղերի ու ցեղախմբերի լոկալ կուլտուրաների հիմքի վրա։ Հայ ժողովուրդը Արևելքի գավակն է և նրա մշակույթն իր արմատներով արևելյան է։ Այն հնագույն ժամանակներից ի վեր կապեր, աղերսներ է ունեցել հինարևելյան մեծ քաղաքակրթության հետ։ Վերջինիս դրսևորումներից մեկը՝ ուրարտական մշակույթն էլ առաջացել և զարգացել է Հայկական լեռնաշխարհում, իսկ Ուրարտուի անկումից հետո ինչոր չափով կազմել է ձևավորվող համահայկական մշակույթի բաղադրիչ մասերից մեկը։ Հայկական մշակույթը առաջացել և զարգացել է Մերձավոր Արևելքում, այդ միջավայրի հետ ունենալով սերտ կապեր նաև հետագայում։ Այս ամենը պայմանավորել են հայկական մշակույթի արևելյան բնույթը, նրա առաջին հիմնական գիծը կամ ուղղությունը։

Միաժամանակ հայ ժողովուրդը, ապրելով Ասիայի ու Եվրոպայի սահմանագլխին, շուտով ներգրավվում է հունա-հելլենիստական՝ հին կամ անտիկ աշխարհի ոլորտը, ապրում է նրան բնորոշ հասարակական-տնտեսական վերափոխություններ, կապեր և շփումներ է ունենում միջերկրածովյան ավազանի երկրների, հունա-հելլենիստական-հռոմեական քաղաքակրթության հետ և տակավ առ տակավ յուրացնում է նրա նվաճումներն ու գծերը։ Այսպիսով, ավելի քան երկու հազար տարի առաջ հայկական մշակույթի մեջ ձևավորվում է հելլենիստական ուղղությունը կամ երկրորդ հիմնական գիծը, որով հայկական մշակույթը կապվում է արևմտյան մշակույթի հետ։ Հայկական մշակույթի արևմտյան ուղղությունը կամ գիծը արևելյանի հետ միասին դառնում է հայ մշակույթի հետագա դարավոր զարգացման մշտական գործոն։

Միջին դարերում հայկական մշակույթը տևական և սերտ կապերի մեջ գտնվեց ինչպես բյուզանդական, նույնպես և արաբա-իրանական քաղաքակրթությունների հետ։ Հայտնի են Միջերկրական ծովի ափին առաջացած Կիլիկյան հայկական պետության բազմակողմանի կապերը Բյուզանդիայի, ապա նաև խաչակիրների ու եվրոպական երկրների հետ XI—XIV դդ.։

Հետագայում պարսկական ու թուրքական լծի տակ հեծող հայ ժողովուրդը ազատագրական պայքարի ելած, շուրջ երկու դար թեկում էր Վատիկանի և արևմտաեվրոպական պետությունների պալատների դռները՝ օգնության հույսով։ Այդ դեգերումները ապարդյուն եղան։ Սակայն նույն ժամանակներում հայ ժողովրդի մշակութային կապերն Արևմուտքի հետ ի նոր վերսկսվեցին, մանավանդ հայ գաղթականության, գաղթավայրերի և առևտրականների միջոցով։

Նոր ժամանակներում հայ ժողովուրդը, արևելյան ժողովուրդների թվում, առաջիններից մեկն էր, որը լայնորեն հաղորդակից դարձավ եվրոպական նոր քաղաքակրթությանը՝ Արևմտյան Եվրոպայի երկրների հետ ունեցած կապերի, մանավանդ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո ռուսական նոր մշակույթին անմիջապես հաղորդակից լինելու շնորհիվ։

Այսպիսով, հայ ժողովրդի մշակույթի մեջ հազարամյակներ առաջ ձևավորված երկու հիմնական ուղղությունները դարերի ընթացքում, որոշ տատանումներով հանդերձ, մշտապես պահպանվեցին, պայմանավորելով հայկական մշակույթի զարգացման ընթացքն ու բնույթը և կապերը համամարդկային քաղաքակրթությունների հետ, հաղորդելով նրան ընդհանուր պատմական հնչեղություն և ճանաչողություն։

ФОРМИРОВАНИЕ ДВУХ ОСНОВНЫХ НАПРАВЛЕНИЙ В КУЛЬТУРЕ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Академик АН АрмССР Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

Длительный процесс этногенеза армянского народа в VI—IV вв. вступает в свой завершающий период. Закономерным последствием образования армянского народа было формирование общеармянской культуры на основе консолидации и слияния локальных культур населявших страну армянских племен. В формировании этнически единой армянской культуры заметную роль сыграла и урартская культура, ряд достижений которой вошел в армянскую культуру как ее составная часть.

Формировавшаяся армянская культура с ее корнями и истоками была культурой восточного облика как по существу, так и по форме. Она продолжала развиваться на традиционно местной восточной основе. В дальнейшем—в эпоху эллинизма (III—I вв.)—Армения оказалась в ареале эллинистического мира, а в ее социально-экономической, политической и культурной жизни произошли серьезные сдвиги и преобразования. Переживает прогресс рабовладельческий строй, углубляются частно-земледельческие отношения, ведется интенсивное градостроительство, развиваются ремесленное производство, торговля, формируется единое армянское государство, приобретающее черты эллинистической монархии, расширяются торгово-экономические, политические и культурные связи Армении со странами эллинистического мира.

Таким образом, наряду с первым и основным, традиционно-местным, восточным направлением в армянской культуре формируется эллинистическое, западное направление. Систематические раскопки в Арташате, Армавире, Гарни и других местах показывают, что эллинистическое, в дальнейшем позднеантичное направление проявлялось почти во всех областях культуры древней Армении вплоть до становления феодального общества и обращения армян в христианство. Носителями эллинистической культуры в Армении были не только царский двор и знать, но и городское население. Раскопки показывают, что некоторые ее элементы проникли также в сельские местности.

Традиционно-местное восточное и эллинистическое—западное— направления не были отделены стеной друг от друга, однако их взаимосвязь и взаимное проникновение происходили неравномерно.

Формировавшееся эллинистическое направление в культуре древней Армении наряду с первым, традиционно-местным восточным, направлением становится постоянно действующим фактором развития армянской культуры и в дальнейшем претерпевает видоизменения, подчиняясь закономерностям развития культуры последующих эпох.